ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«19» հոկտեմբեր 2019թ. N 426-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2061-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 2061-Ա հրամանի նախաբանում «Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 52 արձանագրային որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետով» բառերը փոխարինել «Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 11.1-րդ կետը և 18-րդ կետի 20-րդ ենթակետը» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ